ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՄԵՍՐՈՊԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԽԹԱՆՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ
(Հայաստանի Հանրապետության օրինակով)

Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., պրոֆեսոր Ի.Տ. Տիգրանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր
պրոֆեսոր Ա.Խ.Մարկոսյան
տ.գ.թ., դոցենտ Հ.Ա.Գասպարյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2015թ.-ի մարտի 13-ին, ժամը 13:30-ին Երևանի պետական համալսարանում •ործող տնտեսա•իտության թիվ 015 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ 0009, Երևան, Աբովյան 52
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2015թ.-ի փետրվարի 12-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ա.Հ.Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: 2008թ.-ից սկիզբ առած համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամը կրկին արդիական դարձրեց այն տնտեսական հայեցակարգը, ըստ որի՝ կայուն տնտեսական աճ ապահովելու համար մակրոտնտեսական կարգավորումն ու տնտեսության պետական միջամտությունն անհրաժեշտություն են: Համաշխարհային տնտեսության զարգացման ներկա փուլում աշխարհի զարգացած ու զարգացող գրեթե բոլոր երկրներում տնտեսական աճի տեմպերը դանդաղել են, և ճգնաժամի երկրորդ ալիքը փորձագետներն անխուսափելի են համարում: Նման պայմաններում տնտեսական աճի ապահովման ու խթանման արդյունավետ մեխանիզմների որոնման հիմնախնդիրը արդիական է, իսկ դրա լուծումը տեսական ու գործնական բնույթի բազմաթիվ դժվարություններ ու խոչընդոտներ ունի:

Տնտեսական աճը մեր երկրի համար ևս կարևոր նպատակ է, քանի որ բնակչության մեկ շնչի հաշվով ազգային արդյունքի ավելացումը բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևորագույն պայման է:

Տնտեսական աճի ապահովման բարդությունն ու բազմակողմանիությունը, յուրաքանչյուր երկրի տնտեսական կյանքի առավել կարևոր բնութագրիչ լինելու հանգամանքը, տնտեսական աճի վրա դինամիկ փոփոխվող տնտեսական միջավայրի ազդեցության առանձնահատկությունները, ինչպես նաև տնտեսական աճի գործոնների բացահայտման մեթոդաբանական դժվարությունները պայմանավորում են գիտական-տնտեսագետների մշտական ուշադրությունն այդ հիմնախնդրին: ՀՀ-ում տնտեսական աճն ունի յուրահատուկ գծեր, և պահանջում է հատուկ ուսումնասիրություն: Դրանց թվին կարելի է դասել երկրի տարածքային անհամաչափ զարգացումը, երկարաժամկետ ներդրումների պակասը, արտագաղթի ահագնացող տեմպերը և ՀՆԱ-ի զգալի անկումից հետո դրա վերականգնման անհրաժեշտությունը: Թվարկված խնդիրները տնտեսական աճի ապահովման հնարավորությունների բացահայտման և ուսումնասիրության հիմնախնդիրը դարձնում են հրատապ: Եթե հաշվի առնենք նաև, որ տնտեսական աճի գործոնների վերլուծության մեջ կարևոր դեր են խաղում ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական բնույթի գործոնները՝ մասնավորապես աշխատանքային միգրացիան, արտագաղթը, դրանց հետ կապված դրամական փոխանցումների հոսքերը մեր հանրապետություն, ապա կատարված հետազոտության նշանակությունն ու կարևորությունն առավել կընդգծվի:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը տնտեսական աճի գործոնների բնույթի և ազդեցության չափի վերլուծության հիման վրա ՀՀ տնտեսական աճի ապահովման հնարավորությունների ուսումնասիրությունն է:

Ատենախոսության նպատակի ձեռք բերման համար առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնախնդիրները.

1. Ուսումնասիրել տնտեսական աճի տեսությունները, առանձնացնել և բնութագրել աճի տեսակները:
2. Համակարգել տնտեսական աճի գործոնները:
3. Վիճակագրական տվյալների հիման վրա վերլուծել ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը և միտումները:
4. Առանձնացնել տնտեսական աճն ապահովող և տնտեսական աճի վրա ազդող գործոնները ՀՀ-ում:
5. Ուսումնասիրել ՀՀ տնտեսական աճի ինստիտուցիոնալ գործոնները:
6. Տնտեսաչափական մոդելի և կորելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության հիման վրա գնահատել առանձին գործոնների ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա:
7. Ուսումնասիրել արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների փոխհամաձայնեցման (կոորդինացման) դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը ՀՀ տնտեսությունն է, տնտեսական աճի հիմնարար բնութագրերը:

Հետազոտության առարկան տնտեսական աճի ապահովման հիմնական գործոններն են: Հետազոտության առարկան ուսումնասիրվել է մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծության հիման վրա, բացահայտվել են ՀՀ տնտեսական աճի ապահովման գործոնները և դրանց գործողության մեխանիզմը:

Ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքը: Ուսումնասիրության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմք են հանդիսացել տնտեսական աճի բնագավառում առկա բազմաթիվ գիտական աշխատությունները և գիտավերլուծական նյութերը:

Հետազոտության տեսական հիմքը կազմում են հայրենական և արտասահմանյան գիտնականների տնտեսական աճի վերաբերյալ աշխատությունները:

Հետազոտությունում օգտագործվել են գիտական վերացարկման, ինդուկցիայի, դեդուկցիայի, վերլուծության և համադրման, դինամիկ հետազոտության, վիճակագրական, տնտեսաչափական ուսումնասիրության, համեմատական և գործոնային վերլուծությունների մեթոդները և տնտեսամաթեմատիկական մոդելները:

Աշխատանքի տեղեկատվական հիմքն են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ կենտրոնական բանկի, Միջազգային արժութային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի թողարկած վիճակագրական-վերլուծական և այլ նյութերը:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը կապված են ՀՀ տնտեսությունում տնտեսական աճի ապահովման առանձնահատուկ գործոնների ազդեցության բնութագրման ու քանակական գնահատման հետ:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է հետազոտության ընթացքում արված մի շարք տեսական, գործնական արդյունքներով, որոնցից գիտական նորույթ են հետևյալները.

1. Համակարգվել և դասակարգվել են տնտեսական աճի վրա ազդող տնտեսական և ժողովրդագրական հիմնական գործոնները՝ տարանջատելով դրանք տնտեսական աճն ապահովող գործոններից, բացահայտվել է դրանց դերն ու նշանակությունը տնտեսական աճի խթանման գործում:

2. Կարևորելով խնայողությունների, ներմուծման, կապիտալի կուտակման, փոխարժեքի փոփոխության, օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ), թոշակառուների թվի դերը տնտեսության զարգացման վրա՝ գնահատվել է դրանց ազդեցության չափը ՀՀ տնտեսական աճի վրա:

3. Իրականացվել է ՀՀ տնտեսական աճի ընդհանուր, միջակայքային և կետային կանխատեսում՝ հաշվի առնելով տնտեսական աճի վրա ազդող գործոնների փոփոխությունները:

4. Գնահատվել է աշխատանքային միգրացիայի և դրա հետ կապված դրամական փոխանցումների հոսքերի ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա: Արտագաղթ-տրանսֆերտներ-տնտեսական աճ շղթայի դիտարկման արդյունքում տրվել է

տրանսֆերտների կրճատման այն մակարդակը, որի դեպքում տնտեսությունն սկսում է անկում ունենալ:

Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը: Ներկայացված ատենախոսությունը համալիր գիտական հետազոտություն է, որտեղ կատարված վերլուծություններից և ստացված գիտական արդյունքներից բխող հետևությունների և եզրակացությունների հիման վրա արված առաջարկությունները և գնահատումները իշխանության մարմինները կարող են հաշվի առնել միջին և երկարաժամկետ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման ընթացքում: Դրանք կարող են օգտագործվել նաև ՀՀ դրամավարկային, հարկաբյուջետային քաղաքականությունների միջոցառումները տնտեսական աճի ապահովման պահանջներին համապատասխանեց-նելու, ինչպես նաև ՀՀ տնտեսական աճի խթանմանն ուղղված տնտեսական քաղաքակա-նության մշակման համար:

Ատենախոսության արդյունքների փորձաքննությունները և հրապարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Մակրոէկոնոմիկայի ամբիոնում:

Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտահայտությունն են գտել հեղինակի կողմից հրապարակված երեք գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է աշխատության հիմնական նպատակով, առաջադրված խնդիրներով և վերլուծության տրամաբանությամբ: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելված-ներից: Ատենախոսության ընդհանուր տեքստը կազմում է 151 էջ: Ատենախոսությունում կա 6 աղյուսակ, 19 գծապատկեր, 17 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության հիմնական նպատակն ու հիմնախնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ատենախոսության գիտական նորույթ հանդիսացող

արդյունքներն ու դրանց կիրառական նշանակությունը, հրապարակումները և ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսական աճի տեսական հարցերը», գլխում ուսումնասիրվել է տնտեսական աճի էությունը, առանձնացվել և բնութագրվել են աճի տեսակները, համակարգվել են տնտեսական աճի գործոնները: Գիտական հրապարակումների ուսումնասիրության հիման վրա տնտեսական աճի վրա ազդող գործոնները առանձնացվել են աճը պայմանավորող գործոններից:

«Տնտեսական աճ» երևույթը նոր չէ, բնակչության աճին զուգընթաց այն գրեթե միշտ ուղեկցել է մարդկային հասարակարգին: Առհասարակ, տնտեսական աճ ասելով ենթադրվում է ազգային արտադրության իրական ծավալի այնպիսի երկարաժամկետ փոփոխություններ, որոնք երկար ժամկետում կապված են արտադրողական ուժերի զարգացման հետ: Որպես տնտեսագիտական հասկացություն՝ տնտեսական աճը փոխհարաբերությունների ամբողջություն է, որն առաջանում է մարդկանց միջև արտադրական պայմանների որակական և քանակական վերաձևավորման և աճի ժամանակ՝ հիմքում ունենալով սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման անընդհատ աճող պահանջմունքների բավարարման նպատակ[1]: Տնտեսական աճը դրսևորվում է համախառն արտադարանքի աճող շարժընթացում, ազգային հարստության, արտադրողական ուժերի անընդհատ աճի մեջ և արտադրական հարաբերությունների կատարելագործման մեջ[2]: Տնտեսական աճի ցուցանիշը բնութա·րում է երկրի տնտեսության բարեկեցության մակարդակը:

ՀՀ-ն այսօր դասվում է արդյունավետության վրա հիմնված զարգացման փուլում գտնվող երկրների թվին՝ ի տարբերություն Համաշխարհային մրցունակության 2013/2014թթ. զեկույցի, որում Հայաստանը դասվել էր ռեսուրսների վրա հիմնված զարգացման փուլից դեպի հաջորդ՝ արդյունավետության վրա հիմնված փուլ անցնող երկրների թվին[3]: Արդյունավետության վրա հիմնված զարգացման փուլում Հայաստանի մրցունակության գնահատման ժամանակ առավել մեծ կշիռներ են տրվում բարձրագույն կրթության և վերապատրաստման բարելավմանը, ապրանքային շուկայի և աշխատուժի շուկայի արդյունավետության բարձրացմանը, ֆինանսական շուկայի շարունակական

[1]И. В. Жукова, Факторы, влияющие на экономический рост в сельском хозяйстве, Молодой ученый, — 2012. — №2. — стр. 118.

[2]Райзберг Б., Современный экономический словарь, Л. Лозовский, Стародубцева Е. М.: ИНФРА-М, 1997. стр. 496.

[3]Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության 2014-2015թթ. ինդեքս», ՀՀ ԿԲ, էջ 2, https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/WEFGCI_2014_11.09.pdf:

զարգացմանը, առաջավոր տեխնոլոգիաներից ակտիվորեն օգտվելու ունակությանը և Հայաստանի ներքին կամ արտաքին շուկաների մեծությանը: Դա ենթադրում է, որ ներկայումս Հայաստանի տնտեսական զարգացումը պետք է հիմնվի առավել բարձրորակ արտադրանքի թողարկման վրա:

Տարբեր երկրների տնտեսական աճի բնույթից ելնելով՝ հետաքրքիր դասակարգում է կատարել Վերակառուցման և Զարգացման Համաշխարհային բանկի տնտեսագետ Լենթ Փրիթչեթը: Օգտագործելով 111 երկրների տվյալները 1960-1992թթ. վերաբերյալ՝ նա ուսումնասիրել է տարբեր երկրների աճի տեմպերի փոփոխությունները և դասակարգել տնտեսական աճի տեսակներն ըստ տեմպերի[4]: Նա առանձնացրել է տնտեսական աճի վեց տեսակ, որոնք անվանել է՝ ելնելով դրանց աշխարհագրական նմանակներից:

Տնտեսական աճի ապահովման՝ ավանդական տեսությունների կողմից առաջարկվող զուտ տնտեսական գործոնների նեղ շրջանակով վերլուծության տեսանկյունից տարբեր երկրների տնտեսությունների «վարքի» այսպիսի զանազանությունն, իհարկե, դուրս է գալիս տնտեսական աճի նորդասական տեսության մեկնաբանության շրջանակներից: Այդ պատճառով աշխատանքում փորձ է արվել դիտարկել ՀՀ տնտեսական աճը՝ ներառելով տնտեսական աճն ապահովող և տնտեսական աճի վրա ազդող գործոնների ավելի լայն շրջանակ:

Տնտեսական աճի գործոնները վերլուծվել են դեռևս Կոբի և Դուգլասի, Քոփելենդի, Թինբերգենի, Սթիգլերի, ինչպես նաև Քենդրիկի, Դենիսոնի, Գրիլիխեսի, Ջորգենսոնի, Սոլոուի, Լուկասի և այլոց աշխատություններում:

Տնտեսական աճին հասնելու ուղիների բացահայտման համար հեղինակն աճն ապահովող գործոնները տարանջատել է տնտեսական աճի վրա ազդող գործոններից՝ շեշտադրումը կատարելով վերջիններիս վրա: Այդ նպատակով տնտեսական աճի վրա ազդող գործոնները բաժանել է երկու խմբի՝ տնտեսականի և ժողովրդագրականի: Տնտեսական գործոնների թվին է դասվել երկրի ինստիտուցիոնալ զարգացման մակարդակը, շուկաների մենաշնորհայնացման աստիճանի նվազեցումը, արտադրական ռեսուրսների գների նվազեցումը, տնտեսությունում առկա հարկային պայմանները, ֆինանսավարկային համակարգի արդյունավետության բարձրացումը, սպառողական, ներդրումային և պետական ծախսերի աճը, արտահանման ընդլայնումը, տնտեսությունում

[4]Pritchett L., Understanding Patterns of Economic Growth // The World Bank Economic Review. 2000. Vol. 14. N 2.R 221—250.

արտադրական ռեսուրսների՝ ըստ ոլորտների, երկրի տարածաշրջանների և կազմակերպությունների արդյունավետ վերաբաշխման հնարավորության առկայությունը, հասարակությունում գործող եկամուտների բաշխման կարգը: Տնտեսական աճի վրա ազդելու տեսանկյունից ժողովրդագրական գործոնների շարքում կարևորվել են ծնելիությունը, մահացությունը և միգրացիան:

Ժողովրդագրական գործոնների դիտարկումը կարևոր է, եթե հաշվի առնենք վերջին տարիներին տնտեսական և ֆինանսական համակարգերի գլոբալացման ներքո զարգացած և նոր զարգացող երկրներում մարդկային կապիտալի կուտակման և դրա առկա պաշարի, հետևաբար նաև տնտեսական աճի շարժընթացի վրա մարդկային կապիտալի միգրացիայի ունեցած ազդեցությունը: Ներծին տնտեսական աճի մոդելների հիման վրա կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ մարդկային կապիտալի միգրացիան կամ «ուղեղների» արտահոսքը կարող է ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հատվածներում կրճատել մեկ շնչի հաշվով եկամտի և տնտեսական աճի տեմպերը[5]: Մյուս կողմից, աշխատանքային միգրանտների ուղարկած դրամական միջոցները հանգեցնում են ներքին տնտեսությունում սպառման և խնայողությունների ավելացմանը, ինչը կարող է խթանել տնտեսական աճը և ազդել ընդհանուր բարեկեցության բարձրացման վրա:

Ատենախոսությունում կատարվել է նաև տնտեսական աճի տեսությունների քննական մեկնաբանություն, ինչի համար համառոտ քննարկվել են հասարակական հարստության ստեղծման դասական տնտեսագիտության դպրոցի հայեցակարգը, հասարակական արդյունքի վերարտադրության մարքսյան տեսությունը, արտադրության գործոնների նորդասական տեսությունը և մակրոտնտեսական հավասարակշռության քեյնսյան տեսությունը, ապա նաև 1980-ական թթ.՝ տնտեսական աճի մոդելների, այսպես կոչված, «նոր ալիքի» տեսությունները (Պոլ Ռոմերի[6], Ռոբերտ Լուկասի[7], Սերջիո Ռեբելոյի[8], Ագիոնի և Հոուիթի[9], Գրոսմանի և Հելփմանի[10], ինչպես նաև նրանց մի շարք հետևորդների), որտեղ գիտատեխնիկական առաջընթացը դիտարկվում է որպես էնդոգեն գործոն, ինչով էլ բացատրվում է մոդելների էնդոգենությունը:

---

[5]Nadeem U. Haque; Se-Jik Kim (1995). "Human Capital Flight ": Impact of Migration on Income and Growth.Staff Papers-IMF, Vol. 42, No. 3.(Sep., 1995) pp. 577-607.

[6]Romer P. Increasing Returns and Long-Run Growth // Journal of Political Economy. 1986. Vol. 94. N 5.

[7]Lucas R. On the Mecanics of Economic Development // Journal of Monetary Economics. 1988. Vol. 22.

[8]Rebelo S., Long-Run Policy Analysis and Long-Run Growth // Journal of Political Economy. 1991. Vol. 99. N 3. R 500—521.

[9] Aghion P., Howitt P. A Model of Growth through Creative Destruction; NBER Working Paper. 1990. N 3223; Econometrica. 1992. Vol. 60. R 323—351.

[10]Grossman G., Helpman E. Innovation and Growth in the Global Economy. Cambridge, MA: MIT Press, 1991.

Ներծին (էնդոգեն տնտեսական աճը տնտեսությունում կառուցվածքային փոփոխությունների (նոր ապրանքների, տեխնոլո•իայի, գիտելիքների ստեղծում) վրա հիմնված տնտեսական աճն է, ինչի հետևանքով տեղի են ունենում փոփոխություններ տնտեսվարող սուբյեկտների նախասիրություններում[11] :

Հետաքրքրական և նորամուծական են, հատկապես, տնտեսական աճի ներծին տեսությունում ընդունված տեսական դրույթները և կիրառական հետազոտությունները: Համաձայն դրանցից ստացված արդյունքների՝ տնտեսությունները զարգանում են ոչ միայն ֆիզիկական կապիտալի և ֆիզիկական աշխատուժի աճի, այլ նաև մարդկային կապիտալի կուտակման հիման վրա: Ֆիզիկական աշխատուժի մակարդակը որոշվում է սոցիալական և ժողովրդագրական արտաքին (էկզոգեն) գործոններով, իսկ մարդկային կապիտալը ներառում է անհատի կրթական մակարդակը, աշխատանքի ընթացքում ձեռք բերված արտադրական գիտելիքների պաշարը, կարողությունները, հմտությունները և որակական հատկանիշները: Այս մոդելներում և տեսություններում տնտեսական աճի աղբյուրները բացատրվում են մարդկային կապիտալի և գործնական ուսուցման արտաքին էֆեկտների միջոցով՝ ընդգծելով նվազող սահմանային արտադրողականության ազդեցության բացակայությունը: Առավել մեծ ուշադրություն է դարձված տեխնիկական առաջընթացի և նորամուծությունների առաջացման, իրացման գործընթացների մանրամասն ուսումնասիրությանն ու բացահայտմանը: Այս մոդելները նորամուծությունների արտադրությունը առանձնացնում են որպես արտադրության առանձին հատված, դիտարկում են այդ արտադրական գործունեության մանրամասները, ֆինանսավորման աղբյուրները:

Ատենախոսության երկրորդ՝ «Տնտեսական աճի վրա ազդող գործոնների վերլուծությունը», գլխում, նախ, վերլուծվել է ՀՀ տնտեսության արդի վիճակը, ներկայացվել խոցելի կողմերը, ապա, ելնելով դրանցից և առկա հիմնախնդիրների առաջնահերթությունից՝ տնտեսական գործոններից աշխատանքում վերլուծության է ենթարկվել և ներկայացվել, թե ՀՀ տնտեսական աճի վրա ինչպիսի ազդեցություն են ունենում ինստիտուցիոնալ զարգացման մակարդակը, ներդրումները, մասնավորապես՝ օտարերկրյա ուղղակի ներդրումները և հիմնական ֆոնդերում ներդրումները, համախառն խնայողությունները, արտերկրից ստացվող դրամական փոխանցումները, փոխարժեքի

[11] Макроэкономика, Продвинутый уровень, Б.Е.Бродский, МОСКОВСКАЯ ШКОЛА ЭКОНОМИКИ, МГУ имени М.В. Ломоносова, Москва, МАГИСТР, ИНФРА-М, 2012, стр 209.

փոփոխությունն ու ներմուծման ծավալների փոփոխությունը: Ինչպես նաև տնտեսաչափական մոդելի օգնությամբ կատարվել է այդ գործոնների՝ տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության գնահատում, հաշվարկվել են գործակիցներ, կատարվել կանխատեսում:

Ըստ հեղինակի՝ 2000-2009թթ. ընկած ժամանակահատվածում տնտեսական աճի տեմպը ՀՀ-ում բարձր է եղել համաշխարհային տնտեսության համեմատ (տես աղյուսակ 1): Սակայն 2009թ.-ի համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով ՀՀ տնտեսությունը համաշխարհային տնտեսության համեմատ ավելի մեծ անկում է ունեցել, ինչը բացատրվում էր բազմաթիվ հանգամանքներով, որոնցից առանձնացվել է այն, որ աճի աղբյուրները խոցելի էին և չէին ստեղծում միջազգային մրցունակության հիմքեր:

Ըստ 2013թ.-ի արդյունքների՝ համաշխարհային տնտեսությունը շարունակում է աճել դանդաղ և նվազող տեմպերով: 2013թ.-ին համաշխարհային թողարկման աճը գնահատվել է 3%՝ 2010-2012թթ. միջին տարեկան 4%-ի դիմաց: Արդյունքում 2013թ.-ին համաշխարհային տնտեսությունը 15.8%-ով գերազանում է իր նախաճգնաժամային մակարդակը: Իսկ ՀՀ տնտեսությունն ավելի դանդաղ է վերականգնվում, քան համաշխարհային տնտեսությունը: Այսպես, 2013թ.-ին ՀՀ իրական ՀՆԱ-ի մեծությունը դոլարային արտահայտությամբ (10431 մլն դոլար) կազմել է նախաճգնաժամային 2008թ. մակարդակի (11662 մլն դոլար) 89.4%-ը[12]: Պետք է նշել, որ շինարարությունից բացի, տնտեսության մյուս բոլոր խոշոր ճյուղերը գերազանում են 2008թ. մակարդակը [13]:

Աղյուսակ1.

Համաշխարհային տնտեսության և ՀՀ տնտեսական աճի տեմպը 2002-2013թթ.

(նախորդ տարվա նկատմամբ), %[14]

Ցուցանիշները	Տարիները											
	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Տնտեսական աճի միջին տեմպը աշխարհում (%)	0.7	2.7	4.0	3.5	4.0	3.9	1.3	-2.2	4.4	3.9	3.2	3.0
Տնտեսական աճի տեմպը ՀՀ-ում (%)	13.2	14.0	10.5	13.9	13.2	13.7	6.9	-14.1	2.2	4.7	7.2	3.5

[12] Հայաստանի ազգային հաշիվները 2014, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 27:

[13]Հայաստանի տնտեսական զեկույց 2014, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն», 2014, էջ 11, www.edrc.am/images/Useful-Publications/aer-2014-arm.pdf:

[14]Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Վիճակագրությունն այսօր, Ժամանակագրական շարքեր, ww.armstat.am/am/?nid=126&id=01001", Independent Evaluation Group, World Bank, Data and Ratings, http://ieg.worldbankgroup.org/Data/reports/Svejnar.pdf:

Ատենախոսությունում ՀՀ մակրոտնտեսական արդի վիճակի վերլուծության նպատակով ուսումնասիրվել է տնտեսական աճի ճյուղային կառուցվածքը և բացահայտվել են գերակա ճյուղերը և մյուս ճյուղերի՝ խոշոր ճյուղերին զիջելու պատճառները: Ընդգծվել է, որ վերջին տարիների երկնիշ տնտեսական աճի արդյունքում տնտեսությունում ձևավորվել են գերխոշոր և փոքր ճյուղեր:

Բարձր տնտեսական աճի տարիներին՝ 2001թ.-ից ի վեր, տնտեսության երկու հիմնական ճյուղերի՝ արդյունաբերության ու գյուղատնտեսության տեսակարար կշիռները ՀՆԱ-ի մեջ անընդհատ նվազել են, փոխարենը, կտրուկ ավելացել է շինարարության ճյուղի տեսակարար կշիռը, իսկ ճգնաժամի ընթացքում գերակշռող դարձավ ծառայությունների ոլորտը (ներառյալ առևտուրը), որի բաժինը ՀՆԱ-ում գնալով ավելանում է: Չնայած ծառայություններն ու առևտուրը ՀՆԱ-ում դարձել են առաջատար ուղղություն, այնուամենայնիվ Հայաստանի համար արդյունաբերության զարգացման շարժընթացը մեծ նշանակություն ունի, քանի որ տնտեսական աճի ամենամեծ ներուժն այստեղ է: Հեղինակի կարծիքով պետք է խթանել հատկապես արդյունաբերության աշխատատար և գիտատար ճյուղերը, քանի որ նախ՝ Հայաստանը շրջափակման մեջ է դեռևս, ինչը սահմանափակում է նյութատար արտադրության կազմակերպման հնարավորությունը, երկրորդ՝ մեր երկրում առկա են գիտական մեծ ներուժ և գործազրկության բարձր մակարդակ, և երրորդ՝ գիտատար ճյուղերի զարգացմամբ հնարավոր է ապահովել տեխնոլոգիական առաջընթաց և դիմագրավել համաշխարհային տեխնոլոգիական պարբերաշրջանների ազդեցությանը:

Տնտեսության ճյուղային կառուցվածքի ուսումնասիրության տեսանկյունից հեղինակը կարևորում է նաև գործազրկության մակարդակի վերլուծությունը: Ատենախոսությունում քննարկվել է նաև աշխատավարձերի տարբերության խնդիրը ՀՀ-ում: ՀՀ պետական և ոչ պետական հատվածներում աշխատավարձերի բաշխման անհամաչափության հաշվարկների արդյունքում ստացվել է վարիացիայի գործակցի հետևյալ արժեքները՝ 33.8% ՀՀ պետական հատվածում, և 31.3%՝ ոչ պետական հատվածում: Պետական և ոչ պետական հատվածներում աշխատավարձերի մակարդակների համար հարմար է դիտարկել միջին քառակուսային շեղման գործակիցը՝ միջին քառակուսային շեղման (նշ. σ) և միջինի (նշ. x) հարաբերությունը: Պետական հատվածի աշխատավարձերը տարբեր ոլորտներում նշանակվել է x_i-ով, դիսպերսիան՝ (նշ. D): Տեքստը հաշվարկներով չծանրաբեռնելով՝ ներկայացնենք միջին քառակուսային

շեղման կամ վարիացիայի գործակիցը (k), որպեսզի կարողանանք գնահատել ՀՀ տնտեսության երկու հատվածներում աշխատավարձերի համասեռությունը: Նկատի ունենալով, որ $\sigma = \sqrt{D}$, և $k = \frac{\sigma}{\bar{x}}$,

ՀՀ պետական և ոչ պետական հատվածների համար ստանում ենք՝

$$k_{պետ} = \frac{\sqrt{D_{պետ}}}{\bar{x}} = \frac{\sqrt{768034838,2}}{83288} * 100\% = \frac{27713.44}{83288} * 100\% = \mathbf{33.8}\%$$

$$k_{ոչպետ} = \frac{\sqrt{788801274,6}}{89587,85} * 100\% = \mathbf{31.3}\%$$

Այս ցուցանիշները փաստում են, որ ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերում աշխատավարձերի բաշխումը խիստ անհամասեռ է[15], ընդ որում այդ անհամասեռությունը վերաբերում է և՛ պետական, և՛ ոչ պետական հատվածներին, թեև առաջինում այն արտահայտված է ավելի մեծ չափով:

ՀՀ մակրոտնտեսական վիճակի վերլուծության տեսանկյունից հեղինակը կարևորել է նաև արտաքին առևտրի, մասնավորապես վճարային հաշվեկշռի վերլուծությունը: Արտաքին առևտրի վերլուծության համար ներկայացվել են կանոնավորված (նորմալացված) առևտրային հաշվեկշռի գործակիցը, ներմուծման ծածկման գործակիցը, կատարվել է ըստ երկրների համագործակցության վերլուծություն: Կատարված վերլուծությունից պարզվում է, որ առևտրային հաշվեկշիռն ունի լուրջ հիմնախնդիր՝ պայմանավորված ընթացիկ հաշվի մեծ պակասուրդով: Ընթացիկ հաշիվը պակասուրդային է եղել վերլուծության համար ընտրված ողջ ժամանակահատվածի՝ 2000-2013թթ., ընթացքում և հատկապես վերջին տարիներին այն զգալի խորացել է: Իսկ դա արդյունք է նրա, որ ՀՀ-ն մեծ կախվածություն ունի հետևյալ ապրանքախմբերի գծով ներմուծումից՝ նավթ և նավթամթերք, մեքենաներ և սարքավորումներ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ, սև մետաղներ, ինչը ֆինանսատնտեսական ճգնաժամի ալիքի ներքո հասցրել է ընթացիկ հաշվի պակասուրդի աճին:

ՀՀ տնտեսության կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճի ապահովման տեսանկյունից հատկապես կարևորվում են օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ), որոնք ապահովում են երկրին երկարատև ֆինանսավորում, տեխնոլոգիաներ, մասնագետների վերապատրաստում և, որ ամենակարևորն է, արտաքին շուկաներ: ՕՈՒՆ-երի աճը ՀՀ տնտեսությունում նկատվում է հատկապես 1998թ.-ից սկսած, որից

[15] Ընդունված է, որ եթե վարիացիայի գործակիցը մեծ է 10%-ից, ապա դիտարկվող ցուցանիշների խումբը համարվում է ոչ համասեռ:

հետո արձանագրվել է կայուն աճի միտում (ըստ հաշվարկների՝ ՕՈՒՆ-երի աճի միջին ինդեքսը 1998-2011թթ ընթացքում կազմել է 1,39): Ֆիզիկական ծավալով այն իր առավելագույն մակարդակին է հասել 2008թ.-ին՝ կազմելով 1118445.1 հազ. ԱՄՆ դոլար[16]: 2012թ. ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների համախառն հոսքերը ընդամենը կազմել են 3850558.3 հազ ԱՄՆ դոլար, որոնցից ուղղակի ներդրում են եղել 598449.6 հազ. ԱՄՆ դոլարը [17] : 2013թ.-ին իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների համախառն հոսքերը ընդամենը կազմել է 3698214.0 հազ. ԱՄՆ դոլար, որից ՕՈՒՆ-ինը՝ 304429.2 հազ. ԱՄՆ դոլարը[18], ընդ որում օտարերկրյա ներդրումները նվազել են նախորդ տարվա նկատմամբ համապատասխանաբար 4.0%-ով և 49.1%-ով: ՕՈՒՆ-երի հիմնական ներդրող երկիր են հանդիսացել 2013թ.-ին ԱՄՆ-ը (99116.8 հազ ԱՄՆ դոլար), Ռուսաստանի Դաշնությունը (72470.0 հազ ԱՄՆ դոլար), Գերմանիան (28247.2 հազ ԱՄՆ դոլար), Արգենտինան (12605.4 հազ ԱՄՆ դոլար) [19]:

Տնտեսության հետձգնաժամային փուլում հատկապես կարևորվում է տնտեսական աճի նոր աղբյուրների բացահայտումը, ուստի հրատապ է դառնում փորձառական ճանապարհով պարզել տնտեսական աճի վրա ազդող գործոնները: 1995-2012թթ. վիճակագրական տվյալների վերլուծությամբ ուսումնասիրվել է տնտեսական աճի վրա տնտեսական և ժողովրդագրական գործոնների ազդեցությունը[20] :

Վերլուծության արդյունավետության համար ուսումնասիրվել են տնտեսաչափական մի շարք մոդելներ [21] , որոնց որոշակի ձևափոխությունների արդյունքում հեղինակն առաջարկել է տնտեսական աճի վրա ազդող գործոնների ուսումնասիրության մոդել, որն ավելի նպատակահարմար է ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վերլուծության համար: Մոդելում բացատրվող կամ կախյալ փոփոխական է դիտարկվել ՀՆԱ-ի աճի տեմպը՝ արտահայտված %-ներով (այսուհետ՝ EG): Ըստ

---

[16] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 512:

[17] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 513, 521:

[18] Նույն տեղը, էջ 513, 521:

[19] Նույն տեղը, էջ 521:

[20] Նման վերլուծությունները հենվում են ընդհանուր տեսքով գրված հետևյալ տնտեսաչափական մոդելի վրա՝ $g_i = a_0 + \sum_e a_e x_{ei} + \sum_p b_p z_{pi} + \sum_r c_r DUM_{ri} + \varepsilon_i$, որտեղ՝ g_i –ին համախառն արդյունքի ցուցանիշների աճի կամ հավելաճի տեմպն է i-րդ երկրում, a_0 - ն հաստատուն է, a_e - ն տնտեսական փոփոխականի գործակիցն է, x_{ei} -ն տնտեսական փոփոխականներն են, b_p - ն լրացուցիչ փոփոխականի գործակիցն է, z_{pi} -ն լրացուցիչ փոփոխականներն են, c_r -ը կեղծ փոփոխականի գործակիցն է, DUM_{ri} - ն կեղծ փոփոխականներն են, ε_i -ն մոդելի սխալն է:

[21] Ю.В.Шараев, Теория экокономического роста, Издательский дом ГУ ВШЭ, Москва, 2006, стр. 23-35.

տնտեսական աճի սահմանման՝ որպես համախառն արդյունքի ցուցանիշ կարելի է նաև դիտարկել ՀԱԱ-ն կամ ՀԱԵ-ը[22] : Տնտեսական աճի վրա ազդող կամ բացատրող գործոն-փոփոխականները բաժանվել են երկու խմբի՝ տնտեսական[23] և ժողովրդագրական[24] :

ՀՀ տնտեսական աճի ուսումնասիրման համար հեղինակի կողմից առաջարկված մոդիֆիկացված տնտեսաչափական մոդելը[25] գնահատելով փոքրագույն քառակուսիների եղանակով Eviews6[26] համակարգչային ծրագրի օգնությամբ՝ հեղինակն ստացել է հետևյալ վերջնական արդյունքները.

Աղյուսակ 2.

Մոդելի գնահատման արդյունքները[27]

Կախյալ փոփոխական՝ EG Ընտրանք՝1995-2012 Ներառված դիտումները՝17				
Փոփոխական	Գործակից	Ստնդ. սխալ	t-վիճ	Հավ.
FDI	0.04	0.0074	5.49	0.0053
GFCF	-0.09	0.0200	-4.81	0.0085
GS	0.01	0.0020	5.46	0.0055
IMP	0.48	0.0240	20.08	0.0000
NCT	0.06	0.0105	5.96	0.0040
PEN	-1.44	0.3755	-3.83	0.0186
ER	-0.16	0.0355	-4.56	0.0103

[22]А.Б.Боршов, Большой экономический словарь, Издание 2-е переработанное и дополненое-М.: Книжний Мир, 2009, стр.833.

[23]Տնտեսական ցուցանիշների շարքում դիտարկվել է օտարերկրյա ուղղակի ներդրումների հավելաճի տեմպը տոկոսային արտահայտությամբ (այսուհետ՝ FDI կամ ուղղակի ներդրումների մաքուր ներհոսքերը), փոխարժեքի (դրամ/դոլար) հավելաճի տեմպը տոկոսային արտահայտությամբ (այսուհետ՝ ER), ներմուծման աճի տեմպը տոկոսային արտահայտությամբ (այսուհետ՝ IMP), արտերկրից ստացված զուտ դրամական փոխանցումների հավելաճի տեմպը տոկոսային արտահայտությամբ (այսուհետ՝ NCT), որը զուտ ընթացիկ դրամական փոխանցումներն է արտերկրից, համախառն խնայողությունների հավելաճի տեմպը տոկոսային արտահայտությամբ (այսուհետ՝ GS), հիմնական ֆոնդերում ներդրումների հավելաճի տեմպը տոկոսային արտահայտությամբ (այսուհետ՝ GFCF):

[24] Ժողովրդագրական ցուցանիշների խմբին են դասվում հետևյալ գործոնները՝ արտագաղթողների թվի հավելաճը տոկոսային արտահայտությամբ (այսուհետ՝ EM), թոշակառուների թվի հավելաճը տոկոսային արտահայտությամբ (այսուհետ՝ PEN):

[25] Հեղինակն առաջարկում է ՀՀ տնտեսական աճը դիտարկել հետևյալ մոդիֆիկացված մոդելի միջոցով՝ $EG_t = b_0 + b_1 FDI_t + b_2 GFCF_{t-2} + b_3 GS_{t-4} + b_4 IMP_t + b_5 NCT_t + b_6 PEN_t + b_7 ER_t + b_8 EM_{t-1} + \varepsilon_t$, որտեղ՝ $GFCF_{t-2}$ - ն հիմնական ֆոնդերում ներդրումների հավելաճի տեմպն է t-2-րդ տարում, GS_{t-4} -ն համախառն խնայողությունների հավելաճի տեմպն է t-4-րդ տարում, EM_{t-1}-ն t-1-րդ տարվա արտագաղթողների հավելաճի տեմպն է:

[26]Eviews-ը հանդիսանում է MicroTSP փաթեթի Windows տարբերակը, որը պարունակում է զարգացած «հուշում» (help), որն, ըստ էության, էկոնոմետրիկ մեթոդների ուղեցույց է: Eviews -ի մասին մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ հետևյալ էլ. հասցեում http://www.eviews.com/:

[27] Աղյուսակ (2)-ում ներկայացված արդյունքները հեղինակը բավարար է համարում հետագա ուսումնասիրություններն իրականացնելու համար: Մասնավորապես դետերմինացիայի գործակիցը մոտ է 1-ին (R-squared=0.99), ստանդարտ սխալները (Std. Error) գտնվում են նորմայի սահմաններում, Ակայկի և Շվարցի չափանիշների արժեքները փոքր են, Դարբին-Ուաթսոնի չափանիշը մոտ է 2-ին:

EM	0.14	0.0127	11.00	0.0004
C	2.90	0.6315	4.59	0.0101
Դետերմին.գործ.-R				0.99
Ուղղված դետերմին.գործ.-R				0.99
Ակայկի տեղ.չափ.				2.124
Շվարցի չափանիշը				2.514
Դարբին-Ուաթսոնի վիճակագիրը				1.742
F-վիճակագիրը				227.51
Հավ.(F-վիճակագիր)				0.0000

Հիմք ընդունելով ստացված արդյուքները՝ վերջնական մոդելը ներկայացվել է հետևյալ տնտեսաչափական մոդելի միջոցով.

$$EG_t = \underset{(0.631)}{2.90} + \underset{(0.007)}{0.04}\,FDI_t - \underset{(0.0200)}{0.09}\,GFCF_{t-2} + \underset{(0.002)}{0.01}\,GS_{t-4} + \underset{(0.240)}{0.48}\,IMP_t + \underset{(0.010)}{0.06}\,NCT_t - \underset{(0.375)}{1.44}\,PEN_t - \\ - \underset{(0.035)}{0.16}\,ER_t + \underset{(0.012)}{0.14}\,EM_{t-1} \qquad (1),$$

որտեղ փակագծերում նշված են գործակիցների ստանդարտ սխալները:

Ստացված արդյուքները վկայում են, որ ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում կարևորվում են ներմուծումը, արտագաղթը, աշխատանքային միգրանտների ուղարկած դրամական փոխանցումները և ուղղակի ներդրումները: Մասնավորապես ուղղակի ներդրումների դրական 0.04 գործակիցը վկայում է, որ, այլ հավասար պայմաններում, վերջինիս տարեկան աճը նպաստում է տնտեսական աճի բարձրացմանը: Արտագաղթի ցուցանիշը մյուսների համեմատ (բացի ներմուծումից) ունի բավականին մեծ դրական գործակից, որը բացատրվում է այն հանգամանքով, որ աշխատանքային միգրանտների դրամական փոխանցումները որոշակի ժամանակային խզմամբ նպաստում են տնտեսական աճին: Թեև մարդկային կապիտալի միգրացիայից հետո տնտեսությունում թափուր մնացած աշխատատեղերը արագ լրացվում են, քանի որ առկա է գործազրկության բարձր մակարդակ, և աշխատուժի նկատմամբ պահանջարկի արագ բավարարման արդյունքում ժամանակի ընթացքում միգրացիայի բացասական ազդեցությունը տնտեսական աճի վրա կլինի ավելի փոքր: Այնուամենայնիվ միգրացիայի հետևանքով տեղի են ունենում նաև մարդկային կապիտալի կառուցվածքային փոփոխություններ. ավելի որակյալ աշխատուժը փոխարինվում է համեմատաբար ավելի ցածր որակ ունեցող աշխատուժով: Հեղինակը նշում է, որ ըստ հարցվածներից ստացված պատասխանների[28]՝ ՀՀ-ից ՌԴ և այլ երկրներ մեկնած/ժամանած տնային տնտեսությունների մեծամասնության համար՝ որպես մեկնել/ժամանելու հիմնական պատճառ է նշվել աշխատելը, աշխատանք

[28] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական - վերլուծական զեկույց, Երևան 2012, էջ 25-26:

փնտրելը և սեզոնային աշխատանքը: Երբ տնտեսությունում ցածր է նոր աշխատատեղերի ստեղծման տեմպը և մարդկային կապիտալի նկատմամբ պահանջարկը, արտադրողականության և տնտեսական աճի տեմպերը նվազում են: Փաստորեն արտագաղթը երկարաժամկետում տնտեսական աճը խոչընդոտող գործոն է և կառավարությունը արտագաղթի հիմնախնդիրը մշտապես պետք է պահի իր ուշադրության կենտրոնում:

Հեղինակի կողմից իրականացված հաշվարկներում արտագաղթի 1 % աճը, այլ հավասար պայմաններում ապահովում է միջինում 8.27 % տնտեսական աճ, ընդ որում տնտեսական աճը կարող է տատանվել [6.75%-9.29%] միջակայքում: Նմանատիպ աճ է նկատվում նաև 5%, 10 % արտագաղթի պայմաններում:

Երբ դիտվում է արտագաղթի 5% աճ, իսկ դրամական փոխանցումների 5 % նվազում, մյուս գործոնների նույն մակարդակին մնալու դեպքում, տնտեսական աճը սկսում է դանդաղել: Այս դեպքում տնտեսական աճը կազմում է 7.95 %, իսկ տատանման միջակայքը՝ [6.43%-9.47%]:

Հեղինակի կողմից իրականացված հաշվարկներով գնահատվել է 5 % արտագաղթի աճի պայմաններում տնտեսական աճի արձագանքը դրամական փոխանցումների աճի տեմպի նվազմանը:

Աղյուսակ 3.

Տնտեսական աճի և դրամական փոխանցումների փոփոխությունը

Դրամական փոխանցումների աճի տեմպի նվազումը(%)	Տնտեսական աճի արձագանքը(%)
5	7.95
15	7.32
30	6.37
50	5.11
100	1.95
130	0.05
131	-0.004
145	-0.88
150	-1.20

Ատենախոսության երրորդ՝ «Տնտեսական աճի խթանման մակրոտնտեսական քաղաքականությունը», գլխում քննարկվել է ՀՀ-ում արտահանմանն ուղված արդյունաբերական քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը՝ համարելով այն տնտեսական աճի ապահովման գործիք: Որպես տնտեսական աճի ապահովման, որակական նոր աստիճանի ձեռքբերման ուղի՝ վեր է լուծվել

դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների փոխհամաձայնեցման հնարավորությունները ՀՀ-ում:

Աշխարհի մի շարք առաջատար երկրներում իրականացվող արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունները, համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելուն զուգահեռ, մշակվում և իրագործվում են որոշակի սկզբունքներով, որոնք ընդունելի և կիրառելի են նաև ՀՀ-ի համար: Ելնելով ՀՀ տնտեսական իրականությունից և ուսումնասիրված մոդելներից՝ ՀՀ արդյունաբերական քաղաքականության համար հեղինակի կողմից առաջադրվել են հետևյալ թիրախները, քանի որ այս հիմնախնդիրների վրա շեշտադրումը կհանգեցնի տնտեսական աճի տեմպերի արագացմանը. դրանք են՝ ՀՀ մարդկային կապիտալի պահպանումը և զարգացումը, փոքր և միջին բիզնեսի զարգացումը, արտահանման խթանումը և ներմուծման փոխարինումը, գիտատեխնիկական ներուժի զարգացումը, օտարերկրյա մասնավոր ներդրումների ներգրավման խրախուսումը, տնտեսության բաժնետիրական ձևերի խրախուսումը, առկա տնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը:

Ատենախոսությունում քննարկվել է ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունը և կարևորվել է ՀՀ արտահանելի ոլորտի տնտեսական վիճակի վերլուծությունը:



Գծապատկեր 1. ՀՀ արտահանման ծավալը, երեք ճյուղերի կենտրոնացվածությունը[29] և մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ[30]

[29]Երեք ճյուղերի՝ բնական կամ արհեստական մարարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ, սև մետաղներ, մասնաբաժինը արտահանման մեջ:

Արդյունաբերական քաղաքականության առաջնահերթ խնդիրներից է արտահանման խթանման նպատակով համեմատական առավելություն ունեցող ճյուղերի զարգացումը (տես գծապատկեր1):

Ընդհանուր առմամբ 2013թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 1240.6 մլրդ դրամ, ընդ որում պատրաստի արտադրանքի իրացումը կազմել է 1212.4 մլրդ դրամ, այսինքն՝ 97.9%, որի 37.3%-ն ուղղվել է արտահանմանը[31]: Մինչճգնաժամային ժամանակահատվածում՝ 2003-2007թթ., Հայաստանի արտահանման ոլորտն աճել է միջինում տարեկան 14%-ով: Միևնույն ժամանակ արտահանման աճը զիջել է ՀՆԱ-ի աճի տեմպերին (այդ ժամանակահատվածում տնտեսական աճի հիմնական աղբյուրը ոչ արտահանելի ոլորտներն էին, առավելապես շինարարության ոլորտը): 2013թ. արտահանումը, որը կազ¬մում է ՀՆԱ-ի 14.2%-ը, մեծապես հիմնված է ռեսուրսաինտենսիվ ապրանքների վրա: Նկատվում է նաև արտահանման ապակենտրոնացում՝ մինչև 34.2 % մակարդակի:

Որպես տնտեսական աճի խթանման մյուս ուղղություն դիտարկվում է դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների փոխհամաձայնեցումը: Քանի որ նշված քաղաքականությունները մշակվում և իրականացվում են տարբեր պետական համակարգերի կողմից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նպատակները, ռեսուրսները, սահմանափակումներն ու դրդապատճառները, ուստի դրանց արդյունավետ իրականացումը պահանջում է սերտ համագործակցություն համապատասխան պետական մարմինների միջև: Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետ փոխհամաձայնեցման համար անհրաժեշտ է, որ քաղաքականություններից յուրաքանչյուրը լինի կայուն և վստահելի: Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների փոխհամաձայնեցման մեխանիզմը վերաբերում է բյուջեի պակասուրդի ֆինանսավորմանն ու դրամական բազայի կառավարմանը:

Ուսումնասիրելով հարկաբյուջետային ազդակների վարքագիծը, բյուջեի ցուցանիշների, մասնավորապես պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ, ծախսեր/ՀՆԱ,

---

[30]Հաշվարկները կատարվել են հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա՝ ՀՀ ԱՎԾ, Վիճակարությունն այսօր, Արտահանում, Ժամանակագրական շարքեր, www.armstat.am, ՀՀ ԱՎԾ Տվյալների բազաներ, Ազգային հաշիվներ, ՀՆԱ-ի օգտագործումը (հիմնական ծախսային բաղադրիչներով) , www.armstat.am, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014», Երևան 2014, ՀՀ ԱՎԾ, էջ 463, 465« «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012», Երևան 2012, ՀՀ ԱՎԾ, էջ 460, 465, աղյուսակ 310,«Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008», Երևան 2008, ՀՀ ԱՎԾ, էջ 447, 452, աղյուսակ 304, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004», Երևան 2004, ՀՀ ԱՎԾ, էջ 481, 486, աղյուսակ 333:

[31]Տարեկան տեղեկագիր 2013, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, էջ 12, http://www.mineconomy.am/arm/30/gortsaruyt.pastatuxt.html:

պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշների, պետական պարտքը բնութագրող ցուցանիշների շարժընթացը, ինչպես նաև դրամավարկային պայմանների ինդեքսի, դրամավարկային քաղաքականության գործիքների շարժընթացները՝ հեղինակը եզրակացնում է, որ թեև դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների փոխհամաձայնեցման ձևերը տարբեր են լինում՝ կախված կոնկրետ երկրի իրավիճակից և տնտեսության առանձնահատկություններից, այնուամենայնիվ վերջինիս անհրաժեշտությունն առկա է ցանկացած երկրում՝ անկախ այդ երկրի տնտեսության և ֆինանսական շուկաների զարգացման աստիճանից: Իսկ ՀՀ համար փոխհամաձայնեցման անհրաժեշտությունը կարևորվում է նախևառաջ ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները մեղմելու նպատակով:

Հեղինակը ուշադրությամբ հետևելով հարկաբյուջետային ազդակների վարքագծին, որոնք ցույց են տալիս հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա՝ ընդգծում է, որ բացառությամբ 2005 թվականի, 2004 թվականից հետո հարկաբյուջետային քաղաքականությունը եղել է զսպող (հակացիկլիկ – տնտեսական վերելքի ժամանակ բյուջեն տնտեսությունից ավելի շատ իրացվելիություն հավաքել է, քան ներարկել): Այլ կերպ ասած՝ պակասուրդի կրճատման քաղաքականությունը ճիշտ ուղղություն էր տնտեսական վերելքի ժամանակահատվածում, որն, ի դեպ, հնարավորություն ընձեռեց զգալի կրճատել պարտք/ՀՆԱ ցուցանիշը, և ստեղծել լրացուցիչ պարտք ներգրավելու հիմքեր՝ հետագայում ֆինանսական ճգնաժամին դիմակայելու համար՝ առանց էապես վտանգելու պարտքի կայունությունը: 2008 թվականի ընթացքում գրանցված ընդհանուր առմամբ չեզոք հարկաբյուջետային ազդակի դիմաց 2009 թվականին ձևավորվել է 8.44 % ընդլայնող հարկաբյուջետային ազդակ: Սակայն 2010 թ.-ից գրանցվել է զսպող հարկաբյուջետային ազդակ: 2013թ. գրանցվել է 0.7% զսպող հարկաբյուջետային ազդակ, ընդ որում, եկամուտների գծով գրանցվել է 1.6% զսպող, իսկ ծախսերի գծով 0.9% ընդլայնող ազդակ [32]: Այսպիսով, ընդհանուր առմամբ 2011թ.-ից սկսած բյուջետային քաղաքականությունը եղել է բազմակողմ և միաժամանակ հավասարակշռված: Ընդ որում,

[32] Տեղեկատվություն ՀՀ 2013թ. Պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ, Պետական բյուջեի կատարման վերլուծություն, Պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, Պետական զանձապետական համակարգ, ՀՀ Ֆինանսների նախարարություն, էջ 13, http://minfin.am/up/pbkat/2013q2report.pdf, Հաշվետվություն ՀՀ 2012թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ, Պետական բյուջեի կատարման վերլուծություն, Պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, Պետական զանձապետական համակարգ, ՀՀ Ֆինանսների նախարարություն, էջ 62, http://www.mfe.am/up/pbkat/2012budgetre..pdf, Հաշվետվություն ՀՀ 2013թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ, Պետական բյուջեի կատարման վերլուծություն, Պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, Պետական զանձապետական համակարգ, ՀՀ Ֆինանսների նախարարություն, էջ 60:

մի կողմից նպատակ է դրվել չհակազդել տնտեսական վերականգնմանը, մյուս կողմից, արդյունավետ կառավարել պետական պարտքը և պակասուրդը աստիճանաբար կրճատել:

Հեղինակը նշում է, որ ՀՀ տնտեսությունը 2001 թվականից մտավ տնտեսական վերելքի փուլ, իսկ 2003 թվականից, ինչպես աշխարհի բազմաթիվ զարգացող երկրներում, այնպես էլ ՀՀ տնտեսության մասնավոր հատվածում ֆինանսական ներհոսքի տեմպերն արագացան, որը ներքին տնտեսությունում ստեղծեց լրացուցիչ ամբողջական պահանջարկի աճ և ճնշումներ գնաճի վրա: Զար•ացած երկրների տնտեսական զարգացման փորձը ցույց է տալիս, որ ոչ մի երկիր արտարժութային զգալի ներհոսքի պայմաններում հնարավորություն չունի ապահովելու ցածր գնաճ, բարձր տնտեսական աճ և փոխարժեքի կայուն մակարդակ: Սովորաբար, որպեսզի պահպանվի երկրի մակրոտնտեսական հավասարակշռությունը, անհրաժեշտ է, որ այս փոփոխականներից որևէ մեկը «զոհաբերվի» մյուս երկուսի ցանկալի մակարդակների պահպանմանը: Այդ նպատակով 2007 թվականից ՀՀ ԿԲ ներմուծեց նոր դրամավարկային գործիք՝ սեփական արժեթղթերը, որի միջոցով կատարում էր դասական ստերիլիզացիա. արտարժութային շուկայում ճնշումները մեղմելու նպատակով արժութային շուկայից գնում էր արտարժույթ և այդ գործողությունների արդյունքում ավելցուկ դրամը հետ էր քաշում իր արժեթղթերի տեղաբաշխմամբ: Այս գործողությունների արդյունքում ԿԲ-ն 1-2 տարվա ընթացքում սեփական արժեթղթերի պաշարը հասցրեց մինչև 90 մլրդ դրամի[33] :

Այս գործողություններն արդյունավետ էին, եթե հաշվի առնենք, որ անհրաժեշտ է մի կողմից զսպել փոխարժեքի բարձրացումը, իսկ մյուս կողմից պահպանել գնաճի ցածր մակարդակը, սակայն արդյունքում տոկոսադրույքը զգալի տատանվեց: ԿԲ-ն չէր կարող անվերջ մեծացնել արժեթղթերի իր պորտֆելը, քանի որ արժեթղթերի գծով տոկոսադրույքների աճը բերում էր պետական պարտատոմսերի գծով տոկոսադրույքների աճի և թանկացնում պարտքի սպասարկումը, ինչպես նաև այդ պայմաններում սկսում էր աշխատել ներդրումների արտամղման դասական տարբերակը (բարձր տոկոսադրույքները բացասական էին անդրադառնում ներդրումների վրա): Կար մեկ այլ սահմանափակում ևս՝ ֆինանսական շուկայի փոքր ծավալները հնարավորություն չէին

[33]Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը մինչև ֆինանսական ճգնաժամը և ներկայումս, ՀՀ ֆինանսների նախարարություն, դասախոսություն-ելույթ, էջ 17, http://www.gov.am/u_files/file/documents/xosq-eluyt.pdf:

տալիս արտարժութային մեծ ստերիլիզացիաներ կատարել, քանի որ ԿԲ արժեթղթերի թողարկման շատ մեծ ծավալներ ֆինանսական համակարգը չէր կարող կլանել:

Այսպիսով, զարգացած երկրների փորձի ուսումնասիրությունը հեղինակին թույլ է տվել նկատելու, որ ճգնաժամի ժամանակ և հետճգնաժային փուլում դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները պետք է լինեն հակացիկլիկ-ընդլայնող, այսինքն մասնավոր հատվածի ծախսերի կրճատման դեպքում պետական հատվածը պետք է լինի ծախսողական, որպեսզի ապահովի պահանջարկի անհրաժեշտ աճի տեմպը և հակազդի ֆինանսական ներհոսքի կրճատման ազդեցությանը:

Ատենախոսության եզրակացություններ բաժնում տնտեսական աճի տարբեր տեսությունների ու մոդելների, տնտեսական աճի ապահովման ու խթանման միջազգային փորձի ուսումնասիրության և հեղինակի մշակած տնտեսաչափական մոդելների գնահատման արդյունքների հիման վրա արվել են եզրակացություններ, որոնցից հիմնականները հետևյալներն են.

1. ՀՀ տնտեսական աճը վերլուծելիս անհրաժեշտ է ներառել տնտեսական աճն ապահովող և տնտեսական աճի վրա ազդող գործոնների ավելի լայն շրջանակ: ՀՀ տնտեսական զարգացման արդի փուլում տնտեսական գործոններին զուգահեռ կարևոր են ռազմավարական նշանակություն ունեցող ժողովրդագրական գործոնները:

2. Տնտեսական աճի տեսությունների և մոդելների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ յուրաքանչյուր մոդել զարգացնում է տնտեսական աճի որևէ գործոնի ազդեցություն նեղ տեսանկյունով և հեռանում է տնտեսական աճի հիմնարար մոդելներից: Այնուամենայնիվ կարելի է առանձնացնել երկու մոտեցում: Առաջին մոտեցման կողմնակիցները տնտեսական աճը բացատրում են միայն կապիտալի կուտակմամբ և պնդում, որ տնտեսական աճը միանշանակ պայմանավորված է ներդրումների մեծությամբ: Երկրորդ մոտեցման կողմնակիցները տնտեսական աճը բացատրում են տեխնոլոգիական առաջընթացով, ձեռներեցության բարձր հակվածությամբ և գտնում, որ կապիտալի կուտակումը առանց վերոնշյալ գործոնների առկայության անընդհատ տնտեսական աճ ապահովել չի կարող: Ուստի տնտեսական աճի գործոնները կարևորելիս անհրաժեշտ է հենվել ոչ միայն մեկ կոնկրետ մոդելի վրա, այլ ցուցաբերել վերլուծական մոտեցում՝ գոյություն ունեցող մոդելները հարմարեցնելով ուսումնասիրվող երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակին և տնտեսական զարգացման նպատակով առաջադրված խնդիրներին:

3. 1990-ական թթ. Լ. Լուկասը և Պ. Ռոմերը արմատապես վերափոխեցին տնտեսական աճի՝ մինչ այդ իշխող տեսակետներն՝ առաջարկելով ներծին տնտեսական աճի նոր մոդելներ՝ որպես տնտեսական աճի կարևորագույն գործոն դիտարկելով տեխնոլոգիական առաջընթացը: Համաշխարհային տնտեսական զարգացման արդի փուլում նորամուծական ոլորտի զարգացման մակարդակը (գիտություն, տեխնոլոգիաներ, գիտատար ճյուղեր) ձևավորում է կայուն տնտեսական աճի հիմքերը:

4. Տնտեսական աճի խթանման կարևոր գործոն է մարդկային կապիտալը, որի զարգացումը կարող է ապահովել կայուն և տևական տնտեսական աճ: Տեխնոլոգիական նորարարությունների ընդլայնման միջոցով մարդկային կապիտալի կուտակումը տնտեսական աճի վրա ազդում է ուղղակիորեն, իսկ անուղղակիորեն՝ արտաքին միջավայրի միջոցով ազդում է տեխնոլոգիաների յուրացման և ներդրումների աճի տեմպի վրա:

5. ՀՀ տնտեսական աճի ճյուղային կառուցվածքի վերլուծության, տնտեսության գերակա և մյուս ճյուղերի՝ հարաբերակցության և աճի տարբեր տեմպերի պատճառների ուսումնասիրությունից պարզվում է, որ 1990-1998թթ. ընթացքում ՀՀ տնտեսության զարգացման վրա էական ազդեցություն են թողել ազատական տնտեսական հարաբերությունների կայացմանն ուղղված գործընթացները:

6. Քանի որ ՀՀ-ում դեռևս առկա են նյութատար արտադրության կազմակերպման հնարավորության որոշ սահմանափակումներ, երկրորդ՝ առկա է գիտական մեծ ներուժ, ուստի գիտատար ճյուղերի զարգացմամբ հնարավոր է ապահովել տեխնոլոգիական առաջընթաց, դիմագրավել համաշխարհային տեխնոլոգիական պարբերաշրջանների ազդեցությանը, և զարգացնել աշխատատար և գիտատար ոլորտները:

7. Մարդկային կապիտալի օգտագործման արդյունավետության վրա բացասական ազդեցություն ունի գործարար ոչ բարենպաստ միջավայրը, ինչպես նաև գործազրկության բարձր մակարդակը:

8. ՀՀ վճարային հաշվեկշիռն ունի լուրջ հիմնախնդիր՝ պայմանավորված ընթացիկ հաշվի մեծ պակասուրդով, որը վերջին տարիներին զգալի խորացել է: Մասնավորապես, պակասուրդի ամենամեծ աճը՝ 134.5%, •րանցվել է 2008թ.՝ կազմելով 1381.8 մլն ԱՄՆ դոլար, որը առևտրային հաշվեկշռի պակասուրդի 66.5% աճի հետևանքն է: 2011թ. ընթացիկ հաշվի պակասուրդը եկամուտների և դրամական փոխանցումների

ներհոսքի աճի հետևանքով կրճատվել է: Այս միտումը շարունակվել է նաև 2012-2013թթ.: 2013թ. ընթացիկ հաշվի պակասուրդը 2012թ.-ի համեմատ նվազել է ընդամենը 23.9%-ով:

9. ՀՀ տնտեսությունը նախաճգնաժամային 10 տարիների ընթացքում գտնվել է տնտեսական աճի փուլում: Սակայն աճը որակական իմաստով բավական զիջել է աճի ծավալային, քանակական ցուցանիշներին, մասնավորապես իրական ՀՆԱ-ի ավելացումը չի ուղեկցվել բնակչության կենսամակարդակի համարժեք բարձրացմամբ, խորացել է ճեղքվածքը բնակչության տնտեսապես ապահով և անապահով խավերի միջև և՛ եկամուտների, և՛ ծախսերի գծով, օպտիմալ չի եղել նաև ՀՆԱ-ի արտադրական-տնտեսական կառուցվածքը: Նշված թերությունները ցայտուն դրսևորվեցին համաշխարհային ճգնաժամի տարիներին, որի հետևանքով ՀՀ տնտեսական անկումը աշխարհի զարգացած և զարգացող երկրների շարքում մեծերից է:

10. ՀՀ-ում տնտեսական աճի գործոնների վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ աճի ավանդական գործոնների շարքում առանձնանում է աշխատանքային միգրացիայով պայմանավորված դրամական փոխանցումներից ստացված եկամուտների՝ ֆինանսական միջոցների ներհոսքը, որի շնորհիվ խթանվում է ամբողջական պահանջարկը, աշխուժանում է տնտեսությունը, բարձրանում է տնտեսական ակտիվության մակարդակը, խթանվում է տնտեսական աճը: Սակայն այս երևույթը կարճատև ժամանակաշրջանի համար կարելի է դրական համարել, իսկ երկարատև ժամանակաշրջանում այն դրական դրսևորումներ չի կարող ունենալ, քանի որ ՀՀ եկած դրամական փոխանցումներից խնայողություններ գրեթե չեն կատարվում, ներդրումային միջոցների առաջարկը չի ավելանում, այլ միայն մեծանում է կարճաժամկետ ամբողջական պահանջարկը, որի խթանումը միայն կարճաժամկետ արդյունք կարող է ապահովել:

11. ՀՀ տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի մեծածավալ միգրացիայի կանխմանը և երկարաժամկետ աճի համար մարդկային կապիտալի զարգացման պայմանների ապահովմանը: Այս տեսանկյունից կարևոր խնդիր է կրթական համակարգի մասնագիտական ուսուցման որակի բարելավումը, կրթական սուբսիդիաները, գիտահետազոտական ծառայությունների ընդլայնումը, ընկերությունների կողմից հետազոտությունների, զարգացման և վերապատրաստման վրա կատարվող ծախսերի ավելացումը, բարձր տեխնոլոգիաների գծով պետական գնումների քաղաքականության իրականացումը, լիցենզավորման կամ նմանակման ճանապարհով նոր տեխնոլոգիաների ձեռքբերման ընդլայնումը:

12. ՀՀ-ում առաջիկա տարիների տնտեսական զարգացումները առավելապես կարող են հիմնվել արտաքին տեխնոլոգիաների և նոր արտադրատեսակների ներթափանցման վրա, քանի որ երկրի ներսում դրանց ստեղծումը կամ անհնար է կամ ոչ նպատակահարմար:

13. ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում կարևորվում են ներմուծումը, արտագաղթը, աշխատանքային միգրանտների ուղարկած դրամական փոխանցումները և ուղղակի ներդրումները: Մասնավորապես ուղղակի ներդրումների դրական 0.04 գործակիցը վկայում է, որ, այլ հավասար պայմաններում, վերջինիս տարեկան աճը նպաստում է տնտեսական աճին: Արտագաղթի ցուցանիշի բավականին մեծ՝ 0.14 դրական գործակիցը բացատրվում է տնտեսական աճի վրա որոշակի ժամանակային խզմամբ աշխատանքային մի·րանտների դրամական փոխանցումների դրական ազդեցությամբ: Ներմուծման դրական ամենամեծ 0.48 գործակիցը հիմնավորում է ՀՀ-ում սպառման և ներմուծման միջև առկա ուժեղ կապը, ընդ որում սպառման աճի տեմպը գերազանցում է ներմուծման աճի տեմպին, հետևաբար ներմուծման աճի տեմպի և տնտեսական աճի տեմպի կապը կլինի դրական: Համախառն խնայողությունների ազդեցությունը դրսևորվում է զգալի ուշացումով. միայն 4 տարի առաջ արված խնայողություններն են, այլ հավասար պայմաններում, հանգեցնում տնտեսական աճի:

14. Բնակչության ծերացման գործոնը լուրջ վտանգ է աշխատուժի ապահովման տեսանկյունից: Ստացված արդյունքները փաստում են, որ աշխատանքային միգրանտը, ի տարբերություն սեփական երկրում աշխատողի, ավելի մեծ չափով է նպաստում տնտեսա-կան աճին: Կապիտալի կուտակումը տնտեսական աճի վրա նույնպես ազդում է բացասաբար, սակայն երկու տարի ուշացումով, քանի որ կապիտալը ինքնին չի կարող հանգեցնել տնտեսական աճի, եթե այն ամբողջությամբ չի գործարկվում:

15. Տնտեսաչափական մոդելի շրջանակներում գնահատվել է արտագաղթի տարբեր սցենարների դեպքում տնտեսական աճի արձագանքը դրամական փոխանցումների նվազմանը: Այսպես, 1%, 5%, 10 % արտագաղթի պայմաններում, այլ հավասար պայմաններում, ապահովվում է միջինում 8.27 % տնտեսական աճ, ընդ որում տնտեսական աճը կարող է տատանվել [6.75%-9.29%] միջակայքում: Երբ դիտարկվում է արտագաղթի 5 % աճ և դրամական փոխանցումների 5 % նվազում, մյուս գործոնների նույն մակարդակին մնալու դեպքում տնտեսական աճը սկսում է դանդաղել: Այս դեպքում տնտեսական աճը կազմում է 7.95 %, իսկ տատանման միջակայքը՝ [6.43%-9.47%]:

16. ՀՀ տնտեսության արտահանման ներուժ ունեցող ճյուղերի ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տնտեսության բազմազանեցումն ու համեմատական առավելություն ունեցող ճյուղերի զարգացման պետական աջակցությունը թույլ կտան խթանել տնտեսական աճը ՀՀ-ում: ՀՀ արտահանման խթանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության իրականացման և արտաքին առևտրային հաշվեկշռի պակասուրդի կրճատման համար կարևորվում է ներմուծման փոխարինման քաղաքականության իրագործումը:

17. Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների արդյունավետ համակարգումը տնտեսական աճի և գների կայունության ապահովման անհրաժեշտ պայման է: Կարճաժամկետ համակարգման տեսանկյունից կարևորվում է հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ուղղվածությունների համատեղելիությունը: Երկարաժամկետ համակարգումը ենթադրում է տնտեսական կայունության և հաշվեկշռված աճ ապահովող քաղաքականություն: Նշված քաղաքականությունների համակարգման անկյունաքարը գնաճ-տնտեսական աճ հավասարակշռությունն է: Հատկապես կարևորվում է տնտեսության իրական հատվածի փոփոխականների վրա այդ քաղաքականությունների ազդեցության չափի գնահատումը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1.Լ.Մ. Կարապետյան, ՀՀ տնտեսական աճի վերլուծությունը Լ. Փրիթչեթի՝ տնտեսական աճն ըստ տեսակների դասակարգման համատեքստում, «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում», թիվ 4, Энциклопедия-Арменика, Երևան 2012, էջ 204-214:

2.Լ.Մ. Կարապետյան, Դրամական փոխանցումները՝ որպես ՀՀ տնտեսական աճը պայմանավորող կարևոր գործոն, «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում», թիվ 6, Энциклопедия-Арменика, Երևան 2012, էջ 81-90:

3.Ի.Տիգրանյան, Լ.Մ.Կարապետյան, ՀՀ տնտեսական աճի գործոնային վերլուծություն, «Բանբեր ՀՊՏՀ», թ. 3(31) , «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան 2013, էջ 67-75:

КАРАПЕТЯН ЛУСИНЕ МЕСРОПОВНА

МЕХАНИЗМЫ СТИМУЛИРОВАНИЯ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА (НА ПРИМЕРЕ РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02-"Экономика, управление хозяйством и его отраслями".

Защита диссертации состоится 13-го марта 2015 годав 13.30 часов на заседании специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в Ереванском государственном университете по адресу: 0009, г.Ереван, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

В нынешнем этапе развития мировой экономики, почти во всех развитых и развивающихся странах, темпы экономического роста замедлились, и вторую волну экономического кризиса эксперты считают неизбежным. В таких условиях проблема изыскания плодотворных механизмов обеспечения и стимулирования экономического роста актуальна, а решение этой проблемы имеет множество теоритических и практичных препятствий и трудностей.

Экономический рост является важной целью и для нашей страны, потому что увеличение национального дохода на каждого жителя является важным условием для жизненного уровня жителей.

Целью диссертационной работы является исследование возможностей обеспечения экономического роста РА на основе изучения свойств и мер влияния факторов экономического роста.

Для достижения цели диссертации были предложены и решены следующие задачи:

- Исследовать различные теории экономического роста, разделить и характеризовать виды экономического роста.

- Систематизировать факторы экономического роста.
- На основе статистических данных анализировать нынешнее макроэкономическое состояние и тенденции РА.
- Разделить факторы, обеспечивающие экономический рост от факторов, влияющих на экономический рост.
- Изучить институциональные факторы экономического роста РА.
- Оценить влияние отдельных факторов на экономический рост РА на основе анализа экономической модели и корреляционно-регрессионного исследования.
- Изучить роль промышленной политики, направленный на экспорт, координации денежно-кредитной и фискальной политики в обеспечении экономического роста РА.

Основные результаты и научная новизна диссертации состоят в следующем:

- Были систематизированы и классифицированы основные экономические и демографические факторы, влияющие на экономический рост, отделив их из факторов, обеспечивающих экономический рост, были выявлены их роль и значение в стимулировании экономического роста.
- Были оценены меры влияния на экономический рост РА сбережений импорта, накапленного капитала, изменения обменного курса, прямых иностранных инвестиций, числа пенсионеров, оценив их роль в развитии экономики.
- Было осуществлено общее, промежуточное и точечное предвидение экономического роста РА, учитывая изменения факторов, влияющих на экономический рост.
- Было оценено влияние рабочей миграции и, в этом связи, потоков денежных трансфертов, на экономический рост. В результате наблюдения цепи миграции-денежных трансфертов-экономического роста, был дан тот уровень сокращения трансфертов, при котором экономический рост отсутствует.
- В результате исследования сделаны выводы и предложения, реализация которых повысит продуктивность макроэкономической политики по стимулированию экономического роста РА.

KARAPETYAN LUSINE MESROP

THE STIMULATING MECHANISMS OF THE ECONOMIC GROWTH (AS ARMENIAN CASE STUNY)

The abstract of the Dissertation for receiving the degree of PHD in Economics in the specialty 08.00.02 "Economics, Management of the Economy and its Branches".

The Defense of the Dissertation will take place at 13.30 on March 13, 2015, at the Meeting of Specialized Council in Economics 015 of the Supreme Certifying Committe of the Republic of Armenia acting at the Yerevan State University .

Adress: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia.

ABSTRACT

In the present stage of world economic growth, in almost all the developed and developing countries of the world the rates of economic growth have slowed down and the second wave of the crisis is considered inevitable by experts. In such conditions the provision of the mechanism and ways of developing decisive economic growth is topical and its solution has numerous difficulties and obstacles both in theoretical and practical aspects.

For the RA, the economic growth is also an important objective, because the per capita increase of national product is the major condition for the rise of population's standard of living.

The purpose of the investigation is the study of provision of the RA economic growth on the basis of the nature and size of impact of economic growth factors.

For the achievement of the purpose of the Dissertation the following problems were proposed and solved.

1. To investigate the theories of economic growth, to segregate and characterise the sorts of growth.
2. To coordinate the factors of the economic growth.

3. To analyze the RA macroeconomic situation and purposes based on the statistical data.
4. To segregate the economic growth providing factors from those effecting the growth.
5. To investigate the institutional factors of the RA economic growth
6. To value the influence of separate factors on the growth of the RA based on the econometric model, correlation-regression analysis.
7. To investigate the role of fiscal monetary policies providing the RA economic growth directed to the based on export-oriented industrial policy.

The basic results and scientific novelties of the Dissertation are the following.

1. The primary economic and demographic factors influencing the economic growth have been coordinated and classified and were separated from the factors providing economic growth, their role and meaning in stimulating the economic growth have been revealed.
2. The roles of savings, imports, accumulation of capital, change of rates, foreign direct investments (FDI), the number of pensioners on the development of the economy have been assessed in the RA economic development.
3. The general, intermidiery and point forecast of the factors influencingthe economic developmet of the RA has been carried out.
4. The influence of the labor migration and the flow of monetary transfers connected with it on the RA economic development has been estimated. As a result of the review of emigration-transfers-economic growth chain the level of transfer reduction in case of economic slump has been given.

Based on the results of the investigation inferences and suggestions, whose fulfilment will increase the productivity of macroeconomic policy stimulating the economic growth in the RA were made.